

ԱԽԵՏԱԲԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԿՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կր հրատարակուի ամէն երեքշաբթի: Տարեկան գին 1 1/2, վեց ամսուանը 3/4, մէկտարեկանը 1/2, կամ 60 փութ: Բաժանորդագրութեան վերաբերեալ նամակներ ուղարկուեալ են առ Մր. Տառայի, խմբագրութեան վերաբերեալներն՝ առ Մր. Կրիկ, Կ. պոլիս, Ս. մէրիքան խան:

ՀԱՅՈՐ 32.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՄԱՐՏ 18. 1879

Թիւ 11

ՐԱՎԱՆԻ ԴԱՆԻՍԻԱՆ

Պիտեմոսիոսի դարձանք — ճշգրտեմք կատարել
գործը: — Դերմոսիոսի կայսրութիւնը — Սիլիւսիւսը:
— Զարոն: — Կաստորիոսի գրաստանը: — Վասի:
— Կր տնտես, կամ մարդ և տնտես: — Փաղարական
յուրեր: — Ելիմոսիոսի և ստանդարտի:

ԳԻՆԵՍՈՒՍԻՍԻԱՆ ԿԱՄԱՐԱՆԸ

ԱՄԷՆ. քաղաքակրթութեան երկրի մէջ
մարդոց հոգին ու խնամքը պատանե-
կացի վրայ երկնաւոր կ'աւելնայ: Ար-
դարեւ աղքատ մը յառաջանալով իրեն
դէպի քաղաքակրթութեան կրնայ
շահել շնորհէն զոր աղքատ ի դործ կը
դնէ բարեգործ պատանեկացի վիճակին
այլիւս միջոցներով: Այս միջոցնե-
րէն մասնաւոր ի դործ կը դրուին պատա-
նեկացի մարմնի կորստի իրենց
զարգացնելու, այլը՝ տնտես միջոցը
մշակելու, և այլը՝ տնտես բարոյական
և կրթական կրթութիւնը յառաջ
տանելու: Աղքատ որդի աւելի կը
շնորհայ այս բաներուն համար, այնչափ
աւելի կրնայ իրեն համար յաջող և
փառաւոր ապագայ յառաջ:

Կան աղքատ որ մասնաւոր հոգ կը
տանին որհնել պատանեկեանը փոր-
ձութիւններէ որոց նշանակ են: Այս
փորձութեանց և ոչ մին այնպէս վտան-
գաւոր և ապակոտորէ է ինչպէս ար-
բեցողի ըմպելիքը դործածելու հրա-
պոյրը: Այս տեսակ ըմպելիքի վտան-
գը մասնաւոր յայտն է որ, երբ տն-
գամ մը այնպիսի ըմպելիքի համար
ախորժակ կը ստանայ մարդ, մեծ
գիտաբանութեամբ կրնայ չորս գնել իր
ախորժակին, իսկ եթէ չորս չի գնել,
հետեւեալ կորստաւէ: Քան զարբե-
ցութիւնն աւելի կործանելի ինչ կոչ
Արեւելոսիւնը կը վտանգէ արբեցող
մարդուն ստացածքը, աւելցու-
թիւնը կը խանգարէ. բարձր կ'ապա-
կանէ, և ի վտանգին կը կործանէ
մարմնը և հոգին միտնաբանութեան: Ո՛վ
այնպէս ուղարկելի է ինչպէս թշուառ
արբեցողը: Արեւելոսը կորստած է
այլոց յորդան իր վրայ, ինչո՞ք է իր
ընտանեացի միտնաբանութիւնը և եր-
ջանի լի ինչը, և ուղարկելին համար
ամէն յայտ ունայնապէս չէ:

Այս վտանգին նշանակ է ամէն պա-
տանի: Որչափ և պատուաւոր ըլլայ
աղքատահմը, որչափ նորոգտաւոր
պարտաւոր, որչափ վաղուէն յոյ-
սեան ապագային համար, այն ահա-
ւոր անգունդն կրնայէ ազատ և ա-
պահով չի: Ո՛րչափ աշխուշան ծնողը
լայտն են իրենց որդւոց արբեցու-
թեան անգունդը ինչպէս վաղ: Քա-
նի հարուստ հայրեր ուղած են իրենց
բարձր ուսացածքը տալ ապագայ:

Համար իրենց որդւոցն այս մահա-
ցու մղութեան չլիքներէն: Ո՛րքան
կրթութեան բարձր, ոչ բացառաւոր
իրենց արբեցող որդւոց խոյտաւա-
կութիւնը: Յայտն է թէ ոչ պատիւ
և աստիճան, և ոչ մասնաւոր կրթու-
թիւն ինքնին բաւական են պահել
զերիտաւորապէս այսպիսի ստակալի
վտանգէ:

Յետեւ կամ վաղուէն տարի առաջ
Ամերիկայի մէջ ընդհանուր ամբողջ-
ութիւն էր, ինչպէս հիմա այս երկրին
մէջ է, արբեցողի ըմպելիքը դործա-
ծել, Հարուստ և ուղքաւոր, գիտուն և
աղքատ, երեւելոսական և աշխարհական,
ամէնքը կը խոսէին փչմը: Այս էր սո-
վաթութիւնը, և ոչ ոք կը խորհէր թէ
լուստոյն էր իսպառ հրաժարել այն-
պիսի ըմպելիքի դործածելէ: Բայց
վերջապէս խոհեմ մարդիկ ոկոսն
մտածել ասոր վրայ: Տեսնե՞նք որ մինչ
տանի ամէն օր կրնային փչմը խմել
առանց արբեցողութեան, այլ կարող
չլին չափ գնել իրենց: Տեսնե՞նք
որ, թէ ոչ թէ ծնող իրենց բարձր կե-
նացը մէջ կը խմէին փչմը մը բան կե-
րակայ վրայ առանց վտանգելու,
տնտես արդիւնը շատ անգամ այնպէս
չարաւոր կը ուղարկէին արբեցողի ըմ-
պելիքի դործածելու, որ վերջապէս
կըլլային ուղարկելի գիտնալ: Այս բա-
նեքը գիտող խոհեմ անձինք վերջա-
պէս աւաղարկելին իրենց բարեկամ-
ներուն և ծանոթներուն կողմէլ աւե-
ական մը ընկերութիւն, որոց բարձր ան-
գամը ստարտիքին գրեւոր մը, որ
խոստանային բնաւ վաճել արբեցողի
ըմպելիքը, բայց միայն երբ իրեն գնել
հոգի ըլլար խմել:

Այս աւաղարկութիւնը մարդիկ
ընդունեցան խոհեմ անձինք բոլոր
Ամերիկայի մէջ, և այնպիսի ընկերու-
թիւններ կազմուեցան շատ քաղաք-
ներու և գիւղերու մէջ: Ծնողը տե-
սան որ, եթէ իրենց որդիքն արբե-
ցողի ըմպելիքի համար տնտեսակ
չտանային, գիտնալ պիտի չըլլային
երբեք, և եթէ երբեք չսկսէին խմել
այնպիսի ըմպելիք, պիտի չտանային
այն տնտեսակը: Ուստի և այսպէս
խորհող ծնողք անձնաբարձութեամբ
հրաժարեցան բարձրագին արբեցողի
ըմպելիքի դործածելէ ի սէր որդւոց
իրենց:

Վերջիվերջ ընկերութեանց ան-
գամները ծնողներ կ'ընէին, ուր բա-
նեքն մարդիկ աղքատ կերպով կը
ցոյցնէին արբեցողութեան վտանգը,
և կը համոզէին ուղիներն անգամ ըլ-

լալ այն ընկերութեան, ստարտեղ-
թիւնն առաջ երբեք չլիքնու:

Այս մարդասիրական ջանք արդ-
եամբ հաղորատու և բնական մար-
դիկ խոյտեցին բարձրագին արբեցու-
ցի ըմպելիքը, և այսպէս քաղաք-
ութիւններու աղքատ միայնի գիտնալու-
թեան ծանր և աղետալի հետեւեալներ:

Միտնե՞նք նախ Թուրքիոյ մէջ ե-
րիտաւորները որ մեծ վտանգի նշա-
ւակ են արբեցողի ըմպելիքի երե-
սէն: Միտնե՞նք գիտնալ Թուրքիոյ
քաղաքներուն մէջ անձնաւորացի մար-
դիկ որ այս վտանգը վերջնելու կամ
զէլ թէլ և ինչպէս աշխատին: Չկան
մարդիկ որ գլուխ և աւաղարկող ըլ-
լան արբեցողի ըմպելիքէ հրաժար-
ման ընկերութիւններ կազմուե:

ՆՈՒՍԻՍԻԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ինչ բան է որ աշակերտ մը դիտուն
կ'ընէ: Ճշգրտութիւնը: Ինչ բան է որ
սրբի բարեմասնութիւններէ աւելի
յոյնութիւն կու տայ քաղաքներուն,
բիւրեղներու և վառաբաններու:
Ճշգրտութիւն, որ երբեք կարգի կամ
վիճակի մարդիկ իրենց կարգին և
վիճակին մէջ բարձրագոյն և գերու-
յանց բնայն ինչ է: Ճշգրտութիւնը
փիմիական դործանոցի մը մէջ ի վեր
քան դամեանայի կարեւոր ինչ է: Ճշ-
գրութիւն, Ինչ է որ մարդուն խօսքը
ոսկւոյ օրէն պատուական և բնաւ-
լի կ'ընէ: Ճշգրտութիւնը:

Ամէն դործի մէջ զոր կ'ընեն՝ ճշ-
գրութիւն, իմաստ, կոտորակութիւն
առաջիկ կը վառաբանեն գրեգ, ելե-
ւելի մարդու մը պատմութեան մէջ
սո խօսքերը կը դառնան: «Եղաւ
չիտակ մարդ, յոյնական վառաբան
և գրամատուն (պատմ) նախագահ»:

Այս մարդն իր փառաւոր կեանքը
սիրաւ կոչիլ ներկելով միջոցաւ
աղայ էր, և բարձր կենացը մէջ ինչ որ
բնաւ «պիլ քա» — թէ երբ կոչիլ կը
ներկէր, և թէ երբ գրամատուն գոր-
ծերը կը վարէր: Ինչ որ բնաւ՝ ճշ-
գրութեամբ ըլլաւ, և հորիւստ հարկ
չէր ուրիշ նորէն ընել կամ չսկսել
կամ վարմանը անոր բնաւ գործը,
այլ միշտ անոր գործը գոհացողի
էր և կը գոհուէր:

Ամերիկայի մէջ մեծ դպրոցի մը
նախագահ կ'ըլլէ: «Անգամ մը եր-
կոթաւոր մը վերապահին դատնե-
նակ երիտաւոր մը տեսայ: Այս
երիտաւորին անէր այնպիսի գործ մը
զոր ձեռք անցնել պիտի վաճառէին
չորս հարիւր պատանեկեանք այն քաղա-

քին մէջ: Գործը պատուաւոր էր և
ամառական բարձր, և եթէ երիտա-
ւորը հաւատարմութեամբ կատարէր
այն գործը, անտարակոյս աւելի մեծ
պայանի պիտի հասնէր: Արդ, այս
երիտաւորին ինչպէս ձեռք բերած
էր այն գործը: Երիտաւորին այն
գործը ձեռք բերած էր ոչ թէ հա-
րուստ հայր ունենալով, քանզի աղ-
քատ դործաւորի մը որդի էր, այլ
իր նշանաւոր ճշգրտութեան պատճա-
ռաւ: Երկաթաղայն աւելի քով
մտած էր նախ իրեն գրամատնակի
սպասաւոր, և իրեն յանձնուած ամէն
գործ կը կատարէր հաւատարմու-
թեամբ: Իր պարագայ ժամանակները
կ'անցունէր զև զազարութիւնը և խաւա-
րանութիւնը յառաջ տանելու: Ինչ
ժամանակ ետքը որովհետեւ հետագիւր
մեքենան դործածէր: Անոր գլխաւոր-
ները միշտ կը գտնէին անոր ճշգրտ-
ութիւնը, և կը վառաբանէին անոր գործին
վրայ, վառն զի գիտէին թէ պատանին
անապաւն կերպով կը կատարէր իր
գործը:»

Այսպէս կը յաջողին մարդիկ ամէն
գործի մէջ: Ճշգրտութեամբ դործող
պատանին միշտ սիրելի է: Անեք որ
մարդ կը գործածեն, չեն ուզեր միշտ
հակել անոց վրայ, որպէս թէ իրենց
գործաւորները յիմար կամ խարդախ
են: Եթէ անտղձապարձ մը տնտե-
սէր չարանակ իր գործաւորներուն
քով կենալ տեսնելու համար թէ
չիտակ կը գործեն, կամ եթէ վառա-
բան մը իր հաշուեկալին ըրած
հաշիւները նորէն ուրիշ անցունելով
զսմարելու ոտնադնէր՝ ստուգելու
համար թէ արդեւք չիտակ եղած են
այն հաշիւները, իր գործին մէջ
մարդ գործածելով ինչպէս տեսած
պիտի ըլլար: Անտարակոյս այսպիսի
տնտեսութեան գործաւորներու գործի
տէրերը օրնայն համար էր չուսում ճառ-
բայ կու տային:

Այս յոյնաւոր գրպն ասանք
ճանչցաւ այսպիսի երիտաւոր մը որ
փառաւորն էր: Պատահութիւն ունէր
յառաջ երկնաւոր, բայց իր գործը
ճշգրտութեամբ չկատարելուն համար
մարդիկ չէին վառաբան անոր գործ
յանձնելու: Երբ մաւրհակ կամ պայ-
մանագիր կամ ուրիշ արեւելի գիր մը
կը գրէր, սոս անհոգութեան բան մը
որակաւ կամ տակի կը գրէր, որով
գործը կ'ըլլար լիքն: Ուստի և այս
երիտաւորը փառաւորացի գրեթէ
միշտ անգործ էր:

Այս փառաւորանի գլխաւոր փողոցը

կար ուրիշ երկտասարդ. մասնաւորապէս մը, որոյ զլիւսաւոր յատկութիւնն էր ամէն գործի մէջ զգուշութիւնը և ճշգրտութիւնը: Երբ մուրհակ կամ պայմանագիր կը գրէր, և կամ ուրիշ օրինական կամ դատաստանական գործ մը կը կատարէր, անոր գրուածին և գործին միշտ վստահութիւն կ'ըլլար: Հարկաւ այս մասնաւորապէս շատ կը շահէր, և բոլոր մարդերէն կը յարգուէր:

«Բայց,» կ'ըսեն պատանիներէն ումանը, «երբ ես հասուն մարդ ըլլամ, ճիշդ այն ճամբան պիտի բռնեմ. ես ալ միտք ունիմ ճիշդ և զգուշաւոր ըլլալ:» Թերևս այնպէս պիտի ըլլայ, բայց ուրիշ մը աւելի աղէկ կրնայ ըսել թէ ինչ պիտի ըլլայ, երբ տեսնէք ու այժմու ընթացքը: Քանի մը ճամբայ կայ դատ օրովելու, մին է քառասուն աղէկ սորվիլ, և այսպէս սորվելու համար շատ աշխատութիւն պէտք է. միւս ճամբան է քառասուն աղէկ սորվիլ, և այսպէս սորվելու համար շատ աշխատելու է: Տղայ մը կարճ ժամանակի մէջ վեր ի վերոյ դադարիւր կրնայ ունենալ իր դասին վրայ. բայց դասը ճշգրիտ սորվելու համար կը պահանջուի ժամանակ և աշխատութիւն միանգամայն: Արդ, եթէ դուն, տղաս, դասը կը կարգաս անհոգութեամբ, գիտցիր որ մեծնալէդ ետքն ալ պիտի ըլլաս անհոգ և անզգոյշ. բայց եթէ այսօր ուրնէ սկսիս սովորել ամէն դաս ճիշդ և անթերի սորվելու, ես երաշխաւոր կ'ըլլամ որ կատարեալ մարդ ըլլալէդ ետքն ալ ամէն գործ ճշգրտութեամբ պիտի կատարես:

Միլիոնաւոր մարդիկ աշխարհի վրայ «Գործ, ծործ» կ'աղաղակեն, և գործ շատ կայ, բայց գործ միատուրներուն շատերն անհոգ, անզգոյշ, անվստահելի և անպիտան են: Թօթաբէթ միտքութիւնդ, ով ծոյլ, արթնցիր, և սորվէ գործդ աղէկ կատարել: Եղիւր ճիշդ, կատարեալ, վասն զի կէտի մը կամ ստորակէտի մը պատճառաւ կրնաս գործ և պատիւ գտնել, և կամ դուռնէն վաճառել:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քանի մը տարի է որ աշխարհը բոլորի եւ Թուրքիոյ մէջտեղ պատերազմին լուրերով եւ այն հետաքրքրական դէպքերով որ Գաղիոյ մէջ կը պատահէին այնպէս զբաղեալ էր որ, շատ քիչ ուշադրութիւն ըրած է Գերմանական կայսրութեան:

Ըսուած է թէ, «Երանելի են այն աղքատներ որ պատմութիւն չունին,» այսինքն երանելի են այն աղքատներ որոնց պատմութեան հոսանքն այնպէս մեղմ եւ հանդարտ կը վազէ որ ձայնը չիլուիր: Բայց այս խօսքը միշտ ճշմարիտ է: Գերմանիոյ ներկայ վիճակը կը ցուցնէ թէ առերեսով անգործութիւնը միշտ անվրդով երջանկութեան եւ հանդարտ զարգացման վիճակ է:

Երբ, Գաղիոյ դէմ 1870 թ. մեծ յարկութեանն ետքը, Գերմանական կայսրութիւնը կողմուցաւ, եւ Գերմանական միութիւնը յաջողեցաւ վերջապէս, կարծուեցաւ թէ գեղեցիկ երազ մը կը կատարուէր: Գերմանիա վաղուց կը սպասէր անձկանօք այս վիճակին, եւ երբ այս

քաջ եւ հանճարեղ ազգն ի մի վայր դաւաճեց միակ հզօր տէրութիւն, կարծուեցաւ թէ սպառնալի առանց ամառ պայծառ էր անոր առջեւ: Բայց Գերմանիա փորձով ցուցուց թէ ազգի մը միանալ եւ մէկ տէրութիւն ըլլալը բաւական չէ ազգը միշտ երջանիկ ընելու: Գերմանական ազգն իր այժմու վիճակին մէջ ոչ գոչ է եւ ոչ բարգաւաճեալ:

Նախ, Թերեւս առաւել քան զայլ ազգս եւրոպայի ցամաքին Գերմանիա կը զգայ այս խիստ ժամանակին ճնշումը: Գերմանիոյ մեծամեծ գործատուներէն շատերը դատարի են, առաւելուն ինկած, եւ ժողովուրդը ստիպեալ է յետին խնայութիւն ընել: Ուր Գերմանիոյ յաղթութեամբ աւելցան Գաղիա եւս քան զեւս կ'աճի եւ կը ծաղկի պատերազմին հետ, եւ հիմա կրնայ ըսուիլ թէ Գաղիա եւրոպայի մէջ մի միայն երկիրն է որ կը մեծնայ հարստութեամբ: Գերմանիա տեղ չունի ուր իր վաճառները տանի ծախել, եւ կը հեծէ ընդ բեռաւոր ծախուց որ աւելի ծանր են քան զծախս զորս կ'ընէ Գաղիա:

Գերմանիա 1871 թ. մինչեւ 1875 առաւ Գաղիոյն ոչինչ սակաւ քան 200,000,000 լիրա իրեն առգանք պատերազմի: Բայց եւ այնպէս այնչափ ծախք կ'ընէ Գերմանիա զորաց համար զոր պատրաստ կը պահէ, եւ այնչափ մեծ է կառավարութեան պաշտօնատարաց վճարած ամսականաց եւ հասարակայնի շինութեան ծախուց գումարը, որ կայսրութեան եկամուտը չի բաւեր տարեկան ծախքը գոցելու:

Բոլորի ազգային ժողովուրդ վերջին նիստին մէջ կայսրը ստիպուեցաւ ըսել թէ այս տարի 1,000,000 լիրա բաց ունէր տէրութիւնը, եւ խնդրեց ժողովքին մեծ փութութեան մը համար քուէ տալ կառավարութեան պիտոյքը հոգալու:

Բայց ոչ միայն գործի եւ եկամտից պակասութեան, այլեւ ուրիշ կողմանէ Գերմանիա շատ տարբեր է քան զոր Գերմանիոյ բարեկամը կը փափաքին թէ ըլլար այն երկիրը:

Քանի մը տարիներէ ի վեր Գերմանիոյ քաղաքագիտաց մէջ ազատամտագոյնք ընացին կարեւոր բարեկարգութիւնները: Եւ տէրութեան վարչութեան մէջ: Մանաւանդ կոմս Ալլէնպերկ շատ աշխատեցաւ ժողովուրդը շատ բաներու մէջ մասնակից ընել տեղական կառավարութեանց վարչութեանը:

Երկու տարի առաջ այս իմաստուն եւ հայրենասէր քաղաքագէտը՝ յաջողեցաւ աշխուսականաց ձեւքն առնել տալ Բոլորի քանի մը մասերուն մէջ տիրապետելու իշխանութիւնը, եւ շնորհել այն տեղերուն ժողովուրդը իրենց տեղական կառավարչներն ընտրելու իրաւունքը: Այս բարեկարգութիւնը գործադրուեցաւ Գերմանիոյ արեւելեան գաւառներուն մէջ, բայց Բոլորիական Լեհաստան եւ Բենոստան գաւառը դուրս ձգուեցան այս բարեկարգութեանէ:

Պիլմարք իշխանը, որոյ ազդեցութիւնը տիրող է միշտ Գերմանիոյ մէջ, ակամայ հաճեցաւ ընել այս կրկնապիտակ բարեկարգութիւնը, բայց հիմա զըջացած է, եւ ըսած է որ այն բարեկարգութիւնն առաջ չը տարուի:

Այս պատճառաւ կոմս Ալլէնպերկ հրաժարած է, եւ Գերմանական կառավարութիւնն անգամ մ'ալ տեղի տուած է այն քաղաքագիտաց կանոնին, որ Պիլմարքի պէս կ'ատեն բարեկարգութիւնը, եւ կ'ըզեն տեսնել իրենց թագաւորին իշխանութիւնն ամբողջ, առանց մասնակից ընելու ժողովուրդն այն իշխանութեան:

Գերմանիա իրեն սահմանադրական իշխանութիւն դեռ չաւ թերութիւն ունի: Բարեկարգութիւնը ծանր ծանր յառաջ կը տարուին, եւ քիչ հաւանականութիւն կայ թէ ժողովուրդը կարող ըլլայ ի մօ-

տոյ մասնակից ըլլալ տէրութեան վարչական գործերուն: Բայց թէ Գերմանական ազգը, կանուկ կամ անազան, զօրաւոր եւ բացարձակ ազդեցութիւն մը պիտի ունենայ կառավարութեան վրայ վարչութեան այն ճիւղերուն մէջ որ ըստ իրաւանց ազգին կը վերաբերին, ասոր ոչ ոք կը տարակուսի որ միանգամ ճանչցած է Գերմանական ազգին բնական յատկութիւնները, եւ հասկցած է անոր վերջին ատիճան յարմարութիւնը քաղաքական ազատութեան:

ԱՅԼԵԻԱՅԼԻՔ

Իր 120,000 տեսակ տունկեր ծանօթ են հիմա:

Աշխարհի վրայ գործածուած կարելու մեքենաներուն թիւը 4,000,000 կը հասնի:

Սիամի թագաւորը եւ թագաւորազուն իշխաններէն ոմանք հրապարակաւ յայտնած են իրենց հաճութիւնն այն երկրին մէջ աշխատող միսիոնարաց գործին, եւ ի վկայութիւն իրենց հաճութեանը 452 Անգղիական լիրա տուած են ի նպաստ շինութեան դպրոցի մը: Թագաւորին քարտուղարն ըսաւ թէ թագաւորը չի կրնար օգնել միսիոնարաց Սիամի մէջ Գրիստոնէական կրօնքը հաստատելու, բայց դպրոցներ հաստատելու համար ամէն կարելի օգնութիւն պիտի ընէ:

Ամերիկայի միացեալ Նահանգաց մէջ 1870 թ. 2,659,983 ագարակ կար, որոց իւրաքանչիւրն կը պարունակէր միջին հաշուով իւր 612 արտավար (սէնթ-սէնթ) գետին: Այս ագարակաց տէրերուն թիւն իւր 3,000,000 էր:

Մեծին Բրիտանիոյ մէջ շատ քիչ մարդիկ հողի տէր են: Անգղիոյ եւ Վալէսի մէջ 280 անձինք միայն բոլոր երկրին եօթներորդ մասին տէր են: Իրլանդիոյ մէջ 744 անձինք գրեթէ բոլոր երկրին կիսուն տէր են: Սկոտլանդի մէջ 24 անձինք բոլոր երկրին աւելի քան չորրորդ մասին տէր են, եւ 70 անձինք բոլոր երկրին իւր կիսուն տէր են: Մէկ հոգի միայն ունի 5,454,192, եւ ուրիշ հինգ հոգաց իւրաքանչիւրն ունի աւելի քան 1,225,000 արտավար գետին: Այս է պատճառ որ Մեծին Բրիտանիոյ մէջ ոմանք չափազանց հարուստ են եւ ոմանք չափազանց աղքատ:

ՃԱՐՈՆ

Հիմա ծաբոնի մէջ կան 106 Բուլղարական միսիոնար եւ 44 եկեղեցի: Այս եկեղեցիներէն 12ը՝ բուլղարիկ, եւ 24ը՝ մասալի միայն կը վճարեն իրենց ծախքը: Կան 1,617 եկեղեցաց անգամը որոց մեծ մասն արք են, եւ որ 1877 թ. 747 Օսմանեան լիրա տուին իրենց եկեղեցեաց ծախուցը համար: Ամերիկացի եւ Անգղիացի Բրիտանիայը շատ քաջալերուած են որ այսպէս ծաբոնի մէջ զիրենք հոգացող եկեղեցիներ կամաց կամաց յառաջ կու գան: Հիմա այն երկրին մէջ կան երեք աստուածաբանական դպրոց 100 ուսանողք որ քարոզչութեան կը պատրաստուին, կան նաեւ արդէն 9 բնիկ ձեռնագրեալ քարոզիչ եւ 95 օգնական քարոզիչ: Հիւանդանոցաց մէջ որ են ընդ խնամով միսիոնարաց անցեալ տարի իւր 18,000 հիւանդք նայուած են:

ԱՍՏՈՒՐԵԱՆ ԳՐՏՈՒՆ

Ղալաթիոյ աշտարակին մօտ գտնուած այս գրատուն մէջ կը ծախուին Անգղիերէն գիրքեր եւ Հայերէն Անգղիերէն քերականութիւն եւ դպրոցի հարկաւոր բաներ:

ՎԱՆ

Այս քաղաքը հաճոյք կ'ընծայէ զինք տեսնողներուն իր գրիցը կողմանէ: Մէկ կողմը կապուտակ եւ գեղեցկատեսիլ ծովակը տարածեալ է, իսկ միւս կողմը սիւնեալ կան պողտէտ եւ ընդարձակ պարտէզներ՝ անուշահոտ ծաղիկներով եւ վարդենիներով զարդարուած: Վանայ գեղեցկութիւնն աւելցնող ուրիշ իշտ մ'ալ անոր բերդն է, որ քաղաքին կռնակը իրեն հսկայ սլաշտպան կեցած է: Հայու անոյշ կու դայ Վանայ օդը, անոր ջուրը, եւ անոյշ հողը, եւ քաղաքը բաւական յառաջադիմութիւն ստացած է: Բայց ի 1876 թ. հրդեհէն շատ աղէկ վիճակ վայելած է: Այն կողմերուն առեւտրական գործերը եւ արուեստը գրեթէ բոլորովին Վանայ բնակչաց ձեռքն են: Վանա ոչ միայն ունի ընդարձակ ծովակ եւ ընդարձակ պարտէզներ, ունի նաեւ ընդարձակ դըպրոցներ, կրթեալ եւ լուսաւորեալ վարժապետներ, բարենպաստական ընկերութիւններ եւ հաստատութիւններ, ուստի ծնած է կրթեալ, քաղաքավար եւ շնորհալի երիտասարդութիւն մը: Երիտասարդութիւն մը՝ որ ծարաւի է ուսման, որ ամէն կերպով եւ հանգամանքով կը ցուցնէ թէ բարեկամ է կրթութեան եւ հետամուտ զայն ստանալու: Քանի մը բարեկարգական ընկերութիւններ կան որոնց անդամները բաւական ճշմարտախոհիկ են, Սուրբ գիրք կարդալ կու տան, կը քննեն, անոր վրայ կ'ատենարանեն, եւ շատ սէր կը ցուցնեն Աւետարանական կրօնքին: Չեմ կրնար մոռնալ անոնցմէ ոմանց այցելութիւնն առ իս, եւ Աւետարանի ներքին կրօնին վրայ քաղցր խօսակցութիւնը, եւ մարդասիրութիւնը զոր այս կերպով ցուցուցին ինծի, քանզի հոգւոյս մեծ միտքութեան մէջ Այս արժանապատիւ անձանցմէ ոմանք անկեղծ են: Ճշմարտութիւնը յառաջ տանելու նպատակաւ անգամ եղած են այն ընկերութիւններուն, եւ ամսէ ամիս ու տարուէ տարի կը սպասեն իրենց ջանիքը արդիւնքին, որ իրենց փափաքներուն նայելով բարեկարգութիւն եւ յառաջադիմութիւն է: Բայց արդեօք մինչեւ հիմա յաջողութեան նշան տեսնած են որ այսպիսի ակնկալութիւն մը ունենան: Փորձառութիւնը կը ցուցնէ թէ շատ քիչ, եւ այն ալ նման այն տեսիլին որ չուրի մէջ կը մեծնայ քիչ ջրով տկար եւ գրեթէ անստուգ: Իրաւ է որ կրթութիւնը ըստ մասին յառաջ կ'երթայ, բայց ոչ ճշմարտութիւնը ու բարոյականութիւնը: Ճշմարտութիւնը, որ է Յիսուս Բրիտանոյ: Վանայ Հայոց այժմու բարոյականին ինչ է: Եթէ իրիկուն մը հոն գտնուելով կարող ըլլայի ամենուրեք ըլլալ այն տեղին համար ամէն տուն, ան ալ կիրակի սուրբ օր մը, ինչքն պիտի տեսնէիր եւ ինչքն պիտի լսէիր, եւ որոնցմէ՝ Եթէ Պօզոս առաքեալ այցելութիւն մը ընէր ու անձամբ ներկայ ըլլար, անշուշտ այն ցաւով զգացումը պիտի ունենար, զոր ունեցաւ երբ առաջին անգամ Աթէնք մտաւ: Սուրբ օրը պահել չիտայ, այլ ըմբռնի, խաղ, լըմբուկ, եւ. ընդգէմ բարոյականի շատ բաներ ի գործ կը դրուին, եւ առաւուրը շատ խորդալի է: Ահա այս վերջին աղեւտութիւնն առաջին գեղեցկութիւնը գրեթէ ըստ ամենայնի կը նսեմացնէ, ու արդաւմութեամբ կը ընցունէ: Ճշմարտութիւնը սիրող եւ ընդունող Հայուն սիրտը: Եթէ բոլոր անոնք որ ճշմարտութիւնը ճանչցած են՝ դաւանին եւ մէկ խումբ կազմին, արդէն ճշմարտութեան կողմը բռնողներուն հետ մեծ բանակ մը կազմած կ'ըլլային, ու Աստուծոյ սպառազինութիւնն իրենց վրայ առած՝ քիչ ժամանակի մէջ կարող պիտի ըլլային այս մեծ քաղաքն իսկապէս բարեկարգել, իրենց Տէրօք ճշմարտութեան վրայ մատուցանել եւ փառաց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ. 6 ըստ Յուն. և մարտ 18 ըստ Լատ., 1879

ԵԼԵՄՍԱԿԱՆ ՁԵՆՈՒՄԱՐԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Թօքմիլի ծրագրերը տակաւին խօսակցութեան նիւթ եւ ամէն օր նոր գրոյցներու պատճառ կ'ըլլայ, բայց յայտնի է թէ այն ծրագրերը յաջողած չէ։ Եթէ յիշեալ ծրագրին անյաջող մնաց, պատճառը ոչ թէ Բուսիոյ բողոքն, այլ նոյն իսկ ծրագրին տկարութիւնն էր։ Յիշեալ ծրագրերը պատճառաւորաբար առանց ըստ արժանւոյն քննելու թուրքիոյ ելեւմտական վիճակը, եւ ասի բաւական պատճառ է ծրագրին անյաջող մնալուն։ Բանի մ'ամիս առաջ թուրքիոյ ելեւմտական վիճակը քննելու համար Անգլիոյ եւ Գաղիոյ կողմէն կարգուած պաշտօնակալք իրենց քննութիւնն աւարտելու վրայ են, եւ կը գտնեն որ յառաջիկայ տարւոյն համար կառավարութեան ծախքը 20,000,000 լիւրա կը հաշուուի, մինչ եկամուտը 15,000,000 լիւրայէ պակաս է։ Հաւանական է թէ տարեկան հաշուեցուցին մէջ նշանակուած յիշեալ ծախսոց կէսէն աւելին ընդհանուր պարտուց չահուն յատկացուած է։ Այս գումարը շատ պիտի գեղջուի, վասն զի հիմա ամէն մարդ գիտէ որ անկարելի է թուրքիոյ առջի հաշուով չափ տալ իր պարտուց համար։ Ծահուց գումարը գեղջելով թերեւս կարելի պիտի ըլլայ հաշուեցուցին մէջ նշանակուած ծախսոց գումարէն 5 1/2 կամ 4 միլիոն լիւրա պակսեցնել։ Ասիկէ աւելի գեղջը ընել դիւրին չէ, վասն զի հաշուեցուցին մէջ նշանակուած ծախսոց գումարը 1874ի հաշուեցուցի ծախսոց գումարէն 9,000,000 լիւրա պակաս նշանակուած է։

Ինչ որ ալ ըլլայ, յայտնի է թէ թուրքիոյ ծախքն աւելի է քան զեկամուտն։ Յորչափ հաշուեցուցին մէջ բաց կայ, նոր փոխառութեան մը համար ձեռք առնուած միջոցներն դժուարաւ կը յաջողին։ Որպէս զի թուրքիա կարենայ փոխառութիւն ընել, նախ եւ առաջ պարտի աւելի եւս նուազեցնել իր ծախքը, կամ նոր եկամուտ գտնելով ծախսոց եւ եկամտից գումարը հաւասարեցնել։

ՆՈՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Պէյքէր փաշայի նախագահութեան ներքեւ յանձնաժողով մը կ'աշխատի նոր ոստիկանութեան կազմութեանը։ Սոյն յանձնաժողովն ամէն միջոց ձեռք կ'առնէ որ նորակազմ ոստիկանութիւնը բուն նպատակին ծառայէ։ Կ'ըսուի թէ պաշտօնակալք եւ ոստիկանք պիտի ընտրուին թէ Մահմետականներէ եւ թէ Բրիտանականներէ, եւ թէ ասոնց ընտրութեան մէջ արժանիք եւ յաջողութիւն միայն պիտի նկատուին։ Կ'իսկուի զաշխարհութեան համեմատ, Անգլիոյ կողմէն թուրքիայէն պահանջուած բարեկարգութիւններէն մին է կանոնաւոր եւ աշխուրժ ոստիկանութեան մը կազմութիւնը։ Ոստիկանութեան գործն է գաւառաց ընտանիքները պաշտպանել ոճրագործութենէ, վերջ տալ աւազակութեան, ձերբակալ ընել ամէն չարագործ, միով բանիւ գաշտերն եւ ձամբաներն երկրագործաց եւ ձամբորդաց համար այնպէս ասպնով ընել ինչպէս են Բերայի փողոցները։ Նպատակին հասնելու համար ոստիկանութեան պաշտօնակալ կարգուելու են ձեռնհաս եւ յաջող մարդէկ որ իրենց պարտաւորութիւնը կատարելու համար փտանգէ եւ աշխատութենէ բնաւ չքաշուին, եւ ոստիկանութիւնը կազմուելու է այնպիսի անձերէ որ պատրաստ ըլլան հետեւել պաշտօնակալաց առաջնորդութեան առանց խորհելու իրենց հանգիստը։ Աւազակներն աշխուրժ եւ գործունեայ են եւ իրենց ասպրէն նպատակներուն հասնելու համար ամէն տեսակ ներդրութիւն եւ դժուարութիւն յանձն

կ'առնեն։ Ոստիկանք աշխուրժութեան եւ գործունեութեան մասին գերազանցելու են աւազակներն, ապա թէ ոչ այս վերջինները կրնան ոստիկանաց ջանքերն ի դերեւ հանել, եւ ըստ առաջնոյն ապականել դաշտերն եւ խալիանել ձամբաները։

Նոր ոստիկանութիւնը պիտի կազմուի նախ Աղբիւնուպոլսոյ, Գասթմուտիի եւ Գամասկուսի գաւառներուն մէջ։ Իւրաքանչիւր գաւառի մէջ ոստիկանութեան հրամանատարութիւնը պիտի յանձնուի Անգլիացի պաշտօնակալներու որ պիտի ունենան Անգլիացի օգնականներ։ Բայց երբ թուրք լրագրիւրք ոստիկանութեան հրամանատարաց վրայ կը խօսին, կը ներկայացնեն զանոնք իբրեւ ուսուցիչք ոստիկանութեան։ Թուրք լրագրաց կողմէն ոստիկանութեան օտարազգի պաշտօնակալաց տրուած այս տիտղոսը յարմար չէ, վասն զի ասիկէ լեւեալայն կը հասկցուի թէ բուն հրամանատարութիւնը պիտի յանձնուի ուրիշ ձեռքերու։ Եթէ թուրք լրագրաց գործածած լեզուն ստուգիւ կառավարութեան նպատակը կը ցուցնէ, կը ստիպուինք ցաւով ըսել թէ նորակազմ ոստիկանութեան բաղձացեալ արդիւնքը յառաջ գալու շատ յոյս չկայ։ Եթէ նոր ոստիկանութիւնը թուրք պաշտօնակալաց հրամանատարութեան ներքեւ մնայ, հին ոստիկանութեան նմանաբար միայն տարբերած պիտի ըլլայ Գաւառաց հանգիստն եւ անդորրութիւնը մեծապէս կախում ունին ոստիկանութեանէն։ Ուստի բացարձակապէս հարկաւոր է որ ոստիկանութիւնը գտնուի այնպիսի անձանց առաջնորդութեան ներքեւ, որ գիտեն թէ ինչ է հանգիստ եւ անդորրութիւն։ Հին ոստիկանութեան հրամանատար թուրք պաշտօնակալք գործով ցուցուցած են թէ չեն գիտեր յիշեալ բառերուն բուն նշանակութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հակահասունեան Կաթողիկոսներուն պատրիարք, Գիւլիէլեան եպիսկոպոսն, անցեալ շաբաթ Բ. դուռը նամակ մը գրելով ծանուցած է թէ մինչեւ ցարդ Պապին կամաց հակառակ վարուած ըլլալուն զըզնացած է, եւ Հռոմ երթալով Պապին հպատակութիւն պիտի յայտնէ, ուստի եւ անցադր խնդրած է, եւ անցեալ չորեքշաբթի օր ձամբայ ելած է Հռոմ երթալու։

— Պոլսոյ մէջ այս օրերս մին գինը շատ սուղցած էր։ Կառավարութիւնը խորհելով թէ մին սուղնալուն մէկ գըլլաւոր պատճառն ալ Բուսիոյ մեծ քանակութեամբ միս զրկուիլն է, արգիլած է Բուսիոյ միս զրկել, մինչեւ որ Պոլսոյ մէջ մին գինն ըստ բաւականին չափանայ։

— Ելեւմտից պաշտօնարանին կողմէն գաւառաց ելեւմտական պաշտօնատարներուն ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ կայսերական հրամանաւ որոշուած է որ յառաջիկայ տարւոյն, այսինքն 95 տարւոյն տասնորդաց տուրքն, նաեւ ոչխարաց տուրքը, մէթալիք ստակով վաճառուին եւ հաւաքուին, եւ յիշեալ տուրք համար մէթալիքի եւ ոսկւոյ տարբերութիւնն ի հաշիւ առնելով չորս հարիւրնոց թղթադրամը մէկ ոսկւոյ տեղ ընդունուի։

— Պատերազմի առնէն գէնքի տակ կանչուած պահապան զորաց (մուսթաֆաֆէ) գէնքերն առնուելով իրենց տեղերը դառնալու հրաման տրուած է, եւ ոմանք արգէն սկսած են երթալ։

— Անցեալ երեքշաբթի գիշեր Հայտար փաշա եկող շոգեկառքը երկաթի գիծէն ելելով կործանեցաւ, եւ շոգայ փողերէն մին պայթեցաւ, եւ շոգին կրակ ընող մարդն սաստիկ կերպով այրեց։ Նոյն գիշեր ձամբան նորոգուեցաւ, եւ հետեւեալ օրը կառաչուն դարձեալ երթեալից սկսաւ։

— Ելեւմտից պաշտօնէին կողմէն հրատարակուած այն ծանուցման վրայ թէ քիչ առնելն թղթադրամը բոլորովին պիտի վերցուի, թղթադրամի գինը բաւական հաստատուած էր, բայց սրովհետեւ այն ծանուցման տարադրելն մնալը տեսնուեցաւ, անցեալ շաբաթ թղթադրամի եւ ոսկւոյ տարբերութիւնն դարձեալ աւելնալ ըսկաւ եւ 500ի մօտեցաւ։ Նաեւ կառավարութեան ամէն հրաման որ այլեւայլ տուրք փոխանակ թղթադրամի մետաղեայ դրամով հաւաքուիլը կը տնօրինէ, պատճառ կ'ըլլայ թղթադրամի յարգին նուազելուն։ Այսպիսի հրամանագրիւրքը կը ցուցնեն ժողովրդեան թէ կառավարութիւնն ալ յարգ չի դնել թղթադրամի։ Եթէ կառավարութիւնը չի յարգեր թղթադրամը, հարկաւ ժողովուրդն ալ չի կրնար յարգ դնել անոր։

— Օսմանեան զօրքը մարտի 9ին մեծ հանդիսիւ մտան Աղբիւնուպոլս։ Նոյն օրը նշանաւոր օր մ'է Օսմանեան տարեգրոց մէջ, վասն զի նոյն օրը Օսմանեան հողն թշնամույն դրաւուէն ազատեցաւ։ Նաեւ այն օրը վերջացաւ Անգլիական նաւատորմին պաշտօնը Մարմարայի մէջ։ Անգլիական նաւատորմիւրք Տարտանեկէն ներս մտաւ երբ հաւանականութիւն կար թէ Բուսական բանակը պիտի գրաւէր զիստանդուպոլս։ Անտարակոյս Անգլիական նաւատորմին ներկայութիւնը մին էր այն զօրաւոր պատճառներէն որ արգիլեցին զԲուսիա Կ. պոլսի մտնելէ, եւ ստիպեցին զանի հաւանել տէրութեանց ժողովոյ մը դուրմարման Սան Սթէֆանոյի զաշխարհութիւնը քննելու համար։ Ուստի Բ. դուռը մեծապէս պարտական է Անգլիական նաւատորմին։ Այս պարտականութեան զգացումով է որ վեհ. Սուլթան Անգլիական նաւատորմին հրամանատարն եւ պաշտօնակալները մեծ խնջոյքի մը հրաւիրած է։

Նաւատորմին հրամանատարն այս հրաւերն ընդունելու համար իր կառավարութեան հրաման խնդրած է։ Անգլիոյ կառավարութիւնն հրամայած ըլլալով թէ քաղաքական պատճառներու համար նաւատորմը մեկնելու է, նաւատորմիւրք անցեալ շաբաթ Տարտանեկէն դուրս ելաւ եւ Պեսիքայի ծոցը խորիսիւ նետեց։

Այս շաբաթ ծովագետն եւ նաւատորմիւրքն պաշտօնակալք յատուկ շոգեկառքով հոգալով խնջոյքն ներկայ պիտի գտնուին։

— Արեւելեան Բուսիոյ բնակիչները խաղաղութեամբ ապրելու եւ Պուլկարիոյ հետ միանալու խորհրդէն ետ կեցնելու համոզել դժուար է։ Խաղաղութիւնը չենք դարձեալ ցուրտ ընդունելութիւն ըրած են յիշեալ գաւառին ելեւմտից տնօրինին, Մ. Շմիտի, որ քանի մ'օր առաջ յիշեալ քաղաքն այցելած էր։ Ըստ դաշխարութեան Պերլինի Բուսական զօրքը վեց շաբաթէն սկսելու են պարպել յիշեալ գաւառը։ Թէ ինչ պիտի ըլլայ Արեւելեան Բուսիոյ վիճակը Բուսաց մեկնելէն ետքը, կարեւոր խնդիր է, վասն զի ամէն առթիւ Պուլկարքը դժգոհութիւն կը ցուցնեն Պերլինի զաշխարհութեան արամադրութեանց դէմ։

— Դըւնուլայէն կը գրեն թէ Պուլկարիտանին աղգային ժողովոյ 11 Մահմետական անգամներն առաջարկած են որ թուրքերէն լեզուն ալ ժողովոյ մէջ գործածուի, բայց ժողովը մեծամասնութեամբ մերժած է անոնց առաջարկութիւնն եւ որոշած է բաց Պուլկարիտէն ուրիշ լեզուն չձանձնալ պաշտօնական։

— Վազըթ լրագրիւրք կը գրէ թէ Յունաստանի պատերազմական գործոց պաշտօնեայն հրաման ըրած է որ Օսմանեան հողը յարձակելու նպատակաւ կազմուած զինեալ խումբերուն գէնքերն առնուին, եւ այս հրամանին վրայ երեք խումբ զինեալ արգիլի բռնուած եւ անոնց գէնքերն առնուած են։

ԱՅԼԵԼԱՅԼՔ

Բուսանիոյ աղգային ժողովը հաւանութիւն տուած է Բուսական սահմանադրութիւնը բարեփոխելու եւ համաձայնեցնելու կրօնական ազատութեանց սկզբանց ըստ տրամադրութեան Պերլինի զաշխարհութեան։ — Նաեւ Սերուիա ըստ

զաշխարհութեան Պերլինի կրօնական ազատութեան վերաբերեալ օրէնքներ հաստատած ըլլալով Կերմանիոյ կողմէն պաշտօնապէս ծանուցուած է իբրեւ անկախ տէրութիւն, — Թրամուէի բնակչութիւնն արտօնութիւն խնդրած է Բերայէն մինչեւ Շիլի թրամուէի ձամբայ մը չինելու։ — Կ'ըսուի թէ Մ. Կոնէն, որ ելեւմտական գործոց հմուտ եւ ազատական կուսակցութեան նշանաւոր անձ մ'է, Կ. պոլսոյ Անգլիական դեսպան պիտի կարգուի փոխանակ Սըր Հէնրի Լէյարտի։ — Բուսիա կը խնդրէ թուրքիայէն Եւրոպայի թողուլ Արեւելեան Բուսիոյի կուսակալին ընտրութիւնը։ — Պուլկարք թաթարազարկել Յունաց զարկը գրաւել ուզած են, բայց Բուսական իշխանութիւնը Պուլկարաց պահանջումը մերժած է։ — Պուլկարաց աղգային ժողովոյ փոխ նախագահներէն մին իր ուսմանց չըմանն աւարտած է Բուսիոյ Հիսարի Բուլբուր գոյէճի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ կառավարութիւնը պատգամաւոր մը զրկած է ի Գապուլ Եագուլ խանի խաղաղութիւն առաջարկելու։ Հեռագրիւրք կը ծանուցանեն թէ Անգլիական երկու վաշտ զօրք յաղթուած են Աֆղաններէն, սակայն յիշուած չէ տեղն ուր այս պարտութիւնը կրած են Անգլիացիք։ Բայց մանր կուխներու մէջ Աֆղանաց ստացած յաղթութիւնները չեն կրնար փոխել պատերազմին վախճանը եւ արգելել Անգլիացիները Աֆղանիստանի մէկ մեծ մասը գրաւել։ Հաւանական է թէ Եագուլ խան գիտէ զայս, ուստի եւ յոյս կայ թէ Անգլիացոց կողմէն առաջարկուած պայմաններուն համեմատ խաղաղութիւն հաստատուի։

— Բանի մը շաբաթ առաջ 12,000 Զուլեներ Էքոնէ կոչուած տեղն, 1,200 Անգլիական զօրաց վրայ յարձակելով մեծ կորուստով ետ մղուեցան։ Ուստի Անգլիական զաղթականութիւնը հիմա աւելի ապահով են Զուլեներու յարձակումներէն։

— Գաղիոյ երեսփոխանական ժողովը Պրոկի դուքսին նախագահութեան ներքեւ գտնուած պաշտօնէութեան դատի կանչուելուն վերաբերեալ առաջարկութիւնը մերժելով ներքոյ պաշտօնէութեան կարծիքը պաշտպանեց, Բայց եւ այնպէս երեսփոխանական ժողովը յայտարարեց թէ Պրոկի դուքսին նախագահութեան ներքեւ գտնուած պաշտօնէութեան ընթացքը մատնութիւն էր։

ՎԵՐՁՆԵՐ ԼՈՒՐԵՐ

Գարսուսի նախորդ կառավարիչ Սէրի փաշա Տրապիզոնի կուսակալ տնտեսեցաւ։ — Կ'ըսուի թէ Լիւլ Պուրիսի եւ Զորլուի մօտերն երկու երկաթուղեաց կամուրջներ կը շինուին, ուստի եւ քանի մ'օր Աղբիւնուպոլսոյ երկաթուղեայ կառաչուներն մինչեւ յիշեալ տեղերը պիտի երթան, եւ ձամբորդներն անկէց անդին ուրիշ կառաչուներով պիտի շարունակեն իրենց ձամբաները։

— Կ'ըսուի թէ հացի գնոյն տարբերութեան փոխարէն կառավարութեան կողմէն ցարդ տրուած օրական 5,000 ոսկին չբաւականանալուն համար վեհ. Սուլթանին կողմէն հրաման եղած է ամէն օր 5,750 ոսկի տալ հացագործաց։

— Բէֆլիկայի ձրաննէզ անուն թերթը յարգար կը կարգայ Գաղիոյ կառավարութեան հրաւիրել զԵւրոպայ, մանաւանդ զԱնգլիա, հարկաւոր յանձնարարութիւններն ընել Բ. դրան Յունաստանի սահմանադրիւրք ուղղութեան մասին Պերլինի տէրութեանց ժողովոյ որոշումը գործադրելու։

— Կալիպոյէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Անգլիական զօրքը Պիրմաշի վրայ քալելու պատրաստութիւններ կը տեսնեն։ Անգլիոյ կառավարութիւնը վերջնագիր մը զրկած է Պիրմաշի կառավարութեան։

ԵԼԵՄՍԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՔԱՆ

Մարտ 5/17, 1879		ԳՐԱՄՔ, Օսմ. լիւրան 100 էն	
Գոնալիտ	13. 5	Լուսիոյ քոյ	89 1/2
Մեթոյէ	407 1/2	Նարոյէն	87 1/2
Բոլազոր	488	Գրիմի	51
Պիւնիս	182	Անգլ. լիւր	109 1/2
Հիւսից	122 1/2		
Մանիս	10 1/2		

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն իրաւագիր շ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Ձագմագմըլար, Յակոբիան խան, Թիւ 12.